



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Նույնքերի 10-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի թելադրությամբ և հրահանգով, Մայր Աթոռում հանդիսությամբ նշվեց «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը՝ ս. պատարագի մատուցմամբ և քարոզով, հոգեհանգստյան պաշտոնի կատարումով և սպա Վեհարանի ջահագարդ դահլիճում՝ հանդիսավոր նիստով:

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը նշելու միջոցառումների մեջ կարեվոր տեղ է գրավում նաև «Արարատ»-ում լույս տեսած կրոնական, եկեղեցական, պատմական, բանասիրական, բարոյագիտական, հայագիտական և հայրենագիտական նյութերի մատենագիտության և այբուբենական, հեղինակային ցանկերի պատրաստությունն ու հրատարակությունը: Մատենագիտությունը, 18 մամուլից բաղկացած, պատրաստ է արդեն և ամեն ամիս, մաս առ մաս, կհրատարակվի «Էջմիածին» ամսագրում: «Արարատ»-ի նյութերի մատենագիտությունը մեծապես կնպաստի մեր բանասիրությանը զբաղվողներին, իրենց գիտական պրպտումների և ուսումնասիրությունների մեջ՝ որպես ուղեցույց և աղբյուր:

«Արարատ»-ի հրատարակության հարյուրամյակին է նվիրված նաև «Էջմիածին» ամսագրի Առյեսքեր-դեկտեմբեր սույն միացյալ համարը, «Արարատ»-ի ոգուն, նպատակին, կատարած հոգևոր, եկեղեցական, մշակութային մեծ դերի մասին գրված լուրջ ուսումնասիրություններով, գիտական հոդվածներով:

«Արարատ»-ի կատարած դերը մեր եկեղեցու պատմության, մատենագրության և բանասիրության մեջ առանձնահատուկ է և եզակի այն իմաստով, որ նա հանդիսացել է կրոնական, լուրջ ու գիտական միակ ամսագիրը եվրոպական առումով և չափանիշով, արևելահայերի մեջ, որի կրոնա-բարոյական, եկեղեցագիտական, դավանաբանական, հայագիտական հարցերի խորը ուսումնասիրության, գիտական մակարդակին, ծավալին ու բարձրության չի հասել ոչ մի այլ կրոնական հայ ամսագիր:

«Արարատ»-ի հրատարակության հիմնական նպատակներից մեկն է եղել նաև մեր ժողովրդի ծոցում բարձրացումն ու ամրապնդումը հայ եկեղեցու պատմական և եկեղեցական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի առաքելության, պաշտպանությունը հայ եկեղեցու դարավոր կարգ ու կանոնին, ուղղափառության, դավանաբանական դիրքին ու ազգային նկարագրին:

Լուսամիտ Գևորգ Դ կաթողիկոսի նախաձեռնությամբ, նրա «ուսումնասեր հոգվույն ետանդյամբը» «Արարատ»-ը հրատարակվում էր նախ որպես «աշխատասիրություն միաբանից Ս. Էջմիածնի... հոգևոր պարտականությունը կատարելու և ճույն հոգևոր կոչման վարկը անձին սեփականելու, որով միայն կարող ենք ազգիս առաջին անմեղապարտ լինել» («Արարատ», 1868, էջ 2) և սպա հայ ժողովրդի «ազգային, բարոյական զարգացմանը սատարելու» (նույն տեղ) ազնիվ մտահոգությամբ:



Գևորգ Դ կաթողիկոսի ձեռնարկը հաջողությամբ էր պսակվում և 1868 թվականի մայիսի 1-ին լույս էր տեսնում «Արարատ» ամսագրի առաջին համարը՝ Գևորգ Դ-ի տնօրինությամբ. «Քննություն Արարատայ Է անընդմիջական տեսչությամբ Վեհափառ Հայրապետին, որոյ և հրամանաւ իսկ տպագրի»:

Կառավարական հրամանում, որով թուլատրվում էր «Արարատ»-ի հրատարակությունը, ասվում էր. «Թույլատրվում է հրատարակել «Արարատ»-ը առանց նախնական քննության Կովկասյան գրաքննչական կոմիտեի, եթե պատրիարքը (Գևորգ Դ) իր վրա վերցնի ամսագրի գրաքննությունը և այն հրատարակի իր պատասխանատվությամբ»:

«Արարատ»-ի շուրջ տարիների ընթացքում համախմբվեց ինչպես հայագիտության, այնպես էլ աստվածաբանության նվիրված պատվական հոգևորականների և մտավորականների պատկանելի մի սերունդ, հայ ժողովրդի կրոնական, մշակութային, հայրենասիրական զարթոնքին նվիրվելու և ծառայելու խոստումով և կոչումով, «հայկազուն սերնդոց արտի և հոգվույն եռանդն ու աշխույժը» վստելու. «հայրենյաց կենտրոնեն, հայրենի հնությանց թանգարանը» բանալու և «ազգային մեծագործությանց պատմական հիշատակները» կենդանացնելու, կապելու համար բովանդակ հայության սիրտը Էջմիածնին և հայրենյաց:

«Արարատ»-ի հրատարակությանը իրենց շնորհակալ աշխատակցությունն են բերել այդ ոգով Աբել արքեպ. Մխիթարյանը, Վահրամ Էսա. Մանուկնին, Օրմանան սրբազանը, Գարրիել եպս. Այվազովսկին, Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան), Անդրեաս, Անանիա, Գրիգոր, Հուսիկ եպիսկոպոսները, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Արշակ Տեր-Միքելյանը, Մեարոյ վրդ. Սմբատյանը, Սահակ վրդ. Ամատունին, Վահան վրդ. Բաստամյանը, Խորեն վրդ. Ստեփանեն, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին, Գևորգ, Կոմիտաս, Երվանդ, Արտակ, Խաչիկ, Գյուտ վարդապետները, Պերո Պոռոչյանը, Հր. Աճառյանը, Գրիգոր Խալաթյանը, Հայկունին, Մ. Արեղյանը, Ն. Ադունցը, Ստ. Մայիսատանցը, Ս. Կանայանը, Կարապետ Կոստանյանը, Արշակ Նահապետյանը, Լեոն, Ն. Մարտ, Սիրական Տիգրանյանը, Հակոբ Մանանդյա-

նը, Գարեգին Լևոնյանը, Սպ. Մելիքյանը, Եր. Լալայանը, Աշոտ Հովհաննիսյանը, Գր. Ղափանցյանը, Արսեն Տերտերյանը և շատ ու շատ սիրելի անուններ:

«Արարատ» ամսագրի հրատարակությունը ջերմ ընդունելություն էր գտնում ընթերցողների կողմից:

Գևորգ Դ-ը ամսագրի մնայուն հրատարակությունը տնտեսապես ապահովելու համար բաժանորդագրությունը պարտադիր դարձրեց բոլոր հոգևորականության և ամեն քահանայի համար. «Բաժանորդագրութիւն Արարատայ յօրէ հրատարակութեան պարտադիր զոլով բոլոր եկեղեցականաց հայրոց» («Արարատ», 1868, էջ 128, նաև Օրմանյան, «Ազգապատում», Գ հտր., էջ 4249):

«Արարատ»-ը հրատարակվեց ավելի քան կես դար և եղավ հայ դավանաբանական մտքի, եկեղեցական պատմության և մատենագիտության, հայագիտության հանդիսարանը, հայեցի բարոյախոսության բեմ և հայկական դատի պաշտպանության ամբիոն:

«Արարատ»-ը պատվով և սրբությամբ կատարեց իր առաքելությունը հայ եկեղեցու պատմության մեջ և հայ հասարակական մտքի զարգացման վրա ունեցավ մեծ և խորը ազդեցություն:

«Արարատ»-ի հառազատ շարունակությունը հանդիսացավ Մայր Աթոռի նոր պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը, որը հրատարակվում է 25 տարիներից ի վեր՝ շարունակելով նույն ոգով և նախանձախրնրությամբ իր կրոնական, եկեղեցական, մշակութային, հայրենասիրական առաքելություն հայ եկեղեցու կյանքում և Մայր Աթոռի նեոկա պատմության մեջ: Առաքելություն՝ երեկ «Արարատ»-ի, այսօր՝ «Էջմիածին» ամսագրի միջոցով:

Մայր Աթոռի միաբանությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ազգիս սիրեի Հայրապետի բարձր ղեկավարության և օրհնության ներքո, վերակրկնում են իրենց սրբազան ուխտը, «Արարատ»-ի հրատարակության հարուրամակի առիթով, շարունակելու իրենց է՛յ համեստ սպասն ու ծառայությունը՝ ի նպաստ հայ մշակույթի, հայ հավատի և հայ ոգիի Արարատը հանդիսացող Մայր Աթոռ ու Էջմիածնի և նրա՛նց միջոցով վեռածնված մեր ժողովրդին և մայր հայրենիքին:

